

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ԳԻՐԸ ԱՄԱՆՈՐԻ ԵՎ ՍՈՒՐԲ ԾՆՆԴՅԱՆ ՏՈՆԵՐԻ ԱՌԹԻՎ՝ ՈՒՂՂՎԱԾ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՅՑ ԵԿԵՂԵՑՈՒ ՆՎԻՐԱՊԵՏԱԿԱՆ ԵՐԵՔ ԱԹՈՌՆԵՐԻՆ, ԹԵՄԱԿԱԼ ԲՈԼՈՐ ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐԻՆ ԵՎ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻՆ

Սիրեցյալ Եղբայր Մեր,

Նոր Տարվո լուսաբացին Մենք հուզումով ողջունում ենք մեծ ավետիսը Մեր Տիրոջ և Փրկչին Հիսուսի Քրիստոսի հրաշք Ծննդյան, հավատքով և հույսով լի, որ մեր Սուրբ Եկեղեցին ու հավատացյալ մեր ժողովուրդը վերստին լուսավորված շնորհներովը Սուրբ Ծննդյան, պիտի կարողանան հոգեպես վերանորոգվել, զորանալ, պայծառանալ և մշտանորոգ եռանդով բուժել իրենց վիրավոր մարմինը ու հասնել մեր ազգի արդար սպասումների իրականացման ափին խաղաղությամբ:

Այս աղերսով շնորհավորում ենք Ձեր Նոր տարին և Սուրբ Ծննդյան լուսաբաշխ տոնը, մաղթելով Ձերդ Ամենապատվության, տիրախնամ Սուրբ Աթոռիդ հոգևոր դասուն, եկեղեցական վարչական մարմիններին և համայն հավատացյալներին երկնային օգնականություն:

Շնորհավոր Նոր տարի և Սուրբ Ծնունդ:

Սիրով ի Քրիստոս՝

ՎԱԶԳԵՆ Ա.
ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին

*
* *

Ամանորի և Սուրբ Ծննդյան տոների առթիվ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի անունով ստացվեցին ամենաջերմ և հարգալից զգացմունքներով զեղուն բազմաթիվ շնորհավորական հեռագրեր և նամակներ

մեր նվիրապետական երեք Սթոռների գահակալներից, արտասահմանի և ներքին բոլոր թեմերի առաջնորդներից, ազգային-եկեղեցական, մշակութային, հայրենակցական, տիկնանց, օրիորդաց և երիտասարդաց զանազան կազմակերպություններից, հայ և օտար պաշտոնական անձնավորություններից:

Հանուն Հայոց Հայրապետի ջերմ շնորհակալություն ենք հայտնում ստացված պատասխան շնորհավորականների համար: